ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ՄԱԶԾ-ԳԷՀ միջին ծավալի ծրագիր

ԲԱՂԱԴՐԻՉ 1

Պահպանվող տարածքների համակարգի ռացիոնալացում

ԶԵԿՈՒՅՑ

Պետական արգելավայրերի կառավարման ինստիտուցիոնալ կապերի ձևավորում

ԵՐԵՎԱՆ 2011

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ներածություն 3

1. Տարբեր գերատեսչությունների կողմից պետական արգելավայրերի կառավարման առանձնահատկությունները և ազգաբնակչության իրազեկվածության մակարդակը 4

2. Ինստիտուցիոնալ կապերի ձևավորման և ամրապնդման առաջարկվող շրջանակը 9

2.1. Պետական արգելավայրերի կառավարումն իրականացնող կազմակերպությունների միջև համագործակցության կատարելագործում 10

2.2. Պետական արգելավայրերի կառավարման բնագավառում շահագրգիռ կողմերը 12

2.3. Ինստիտուցիոնալ կապերի ձևավորման մեխանիզմները 18

2.4. Պետական արգելավայրերի կառավարման գործընթացում շահագրգիռ կողմերի մասնակցության հնարավորությունները 19

Ամփոփում 20

Ներածություն

2010 թ. մեկնարկած <<Հայաստանի պահպանվող տարածքների համակարգի զարգացում>> ՄԱԶԾ/ԳԷՀ միջին ծավալի ծրագրի կարևոր նպատակներից է ուսումնասիրել պետական արգելավայրերի կառավարման գործընթացներում առկա ինստիտուցիոնալ կապերը՝ շահագրգիռ կողմերի դերակատարության հստակեցման նպատակով: Սույն ծրագրի շրջանակներում իրականացված ուսումնասիրությունների արդյունքները վկայում են, որ պետական արգելավայրերի կառավարման գործընթացներում շահագրգիռ կողմերի միջև համագործակցությունը գրեթե բացակայում է և գոյություն չունեն համակարգված մոտեցումներ արգելավայրերի պահպանության, օգտագործման, գիտական ուսումնասիրությունների և էկոզբոսաշրջության զարգացման ուղղությամբ: Այդ թվում անբավարար է նաև համագործակցությունը համայնքների և տեղական ինքնակառավարման մարմինների հետ, որի հետևանքով, համաձայն կատարված ուսումնասիրությունների արդյունքների, ազգաբնակչության զգալի մասը անտեղյակ է պետական արգելավայրերում պահպանվող արժեքների մասին և պետական արգելավայրերը հիմնականում դիտարկվում են որպես բնական պաշարների օգտագործման հնարավորությունները սահմանափակող կառույցներ: Արդյունքում ստեղծվում են դժվար հաղթահարելի կոնֆլիկտային իրավիճակներ, որոնք հաճախ հանգեցնում են սոցիալական լարվածության: Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ ծագած կոնֆլիկտային իրավիճակների և սոցիալական լարվածության մեղմացումը հնարավոր է միայն համայնքներին և տեղական ինքնակառավարման մարմիններին որպես կարևոր գործընկեր ճանաչելը և բնության հատուկ պահպանվող տարածքներին առնչվող խնդիրների վերաբերյալ ծրագրերի համատեղ մշակումն ու իրականացումը: Հետևաբար պետական արգելավայրերի կայուն կառավարման գործում կարևոր նշանակություն ունի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պետական արգելավայրերի էկոլոգիական արժևորման գիտակցումը, որը հնարավորություն կստեղծի բնապահպանական սահմանափակումների ազդեցության մեղմացման համար:

Ինչ վերաբերվում է պետական արգելավայրերի կառավարումն իրականացնող պետական ոչ առևտրային կազմակերպություններին, որոնք գործում են տարբեր գերատեսչությունների ենթակայությամբ, ապա դրանց միջև ինստիտուցիոնալ կապերը կամ բացակայում են, կամ անբավարար են արտահայտված: Դրան հիմնականում նպաստում է այն հանգամանքը, որ պետական արգելավայրերից շատերը ներկայումս չունեն կառավարման պլաններ և հստակ սահմանազատված տարածքներ: Արդյունքում՝ համակարգված գործողությունների բացակայության պայմաններում գրեթե չեն իրականացվում համատեղ ծրագրեր և գիտական ուսումնասիրություններ: Հետևաբար, նախ առաջնահերթ նշանակություն պետք է տալ պետական արգելավայրերի կառավարումն իրականացնող կազմակերպությունների միջև ինստիտուցիոնալ կապերի ձևավորմանը՝ շահագրգիռ բոլոր կողմերի ներգրավմամբ: Այս նպատակին հասնելու համար լայն հնարավորություններ է ստեղծում <<Հայաստանի պահպանվող տարածքների համակարգի զարգացում>> ՄԱԶԾ/ԳԷՀ միջին ծավալի ծրագրի իրականացումը:

<u>Աշխատանքի նպատակը.</u> Սույն աշխատանքի նպատակներն են՝

1. տարբեր գերատեսչությունների կողմից պետական արգելավայրերի կառավարման առանձնահատկությունների և պետական արգելավայրերի վերաբերյալ համայնքների իրազեկվածության մակարդակի ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա մշակել առաջարկություններ պետական արգելավայրերի կառավարումն իրականացնող կազմակերպությունների միջև ինստիտուցիոնալ կապերի ձևավորման ուղղությամբ.
2. մշակել առաջարկություններ պետական արգելավայրերի կառավարման գործընթացներում բոլոր շահագրգիռ կողմերի ներգրավման հնարավոր ուղիների վերաբերյալ.
3. նպաստել շահագրգիռ կողմերի բաց երկխոսությանը և պայմանավորվածությունների ձեռք բերմանը՝ պետական արգելավայրերի կառավարման գործընթացներում սեփական հնարավորությունների կիրառման և արդյունավետ համագործակցության վերաբերյալ:

1. Տարբեր գերատեսչությունների կողմից պետական արգելավայրերի կառավարման առանձնահատկությունները և ազգաբնակչության իրազեկվածության մակարդակը

Պետական արգելավայրերի արդյունավետ կառավարման գրավականը դրանց նպատակային ստեղծումն է և կառավարումն իրականացնող կազմակերպությունների համապատասխան գործառույթների սահմանումն ու պատշաճ կատարումը:

Ինչպես ցույց են տալիս <<Հայաստանի պահպանվող տարածքների համակարգի զարգացում>> ՄԱԶԾ/ԳԷՀ միջին ծավալի ծրագրի շրջանակներում իրականացված ուսումնասիրությունների արդյունքները, Հայաստանի պետական արգելավայրերը հիմնականում ստեղծվել են բնության հատուկ պահպանվող տարածքների վերաբերյալ ռազմավարության բացակայության պայմաններում և առավելապես նպատակաուղղված են եղել անտառային տարածքների պահպանությանն ու վերարտադրությանը: Ընդ որում, դրանցից շատերը ստեղծվել են առանց լուրջ գիտական և նպատակային նշանակության հիմնավորումների՝ պարզապես նշելով, որ անտառպետությունները համարվում են պետական արգելավայրեր (ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի 1971 թ.-ի ապրիլի 09-ի թիվ 212 կարգադրությունը <<Մարգահովիտի>>, <<Արզական-Մեղրաձորի>>, <<Իջևանի>>, <<Գանձաքարի>>, <<Գետիկի>> պետական արգելավայրերի ստեղծման մասին): Բացի այդ, հանրապետությունում գործող 26 պետական արգելավայրերն առ այսօր չունեն ՀՀ կառավարության կողմից հաստատված կառավարման պլաններ: Հետևաբար խնդիր է առաջանում վերանայել պետական արգելավայրերի ստեղծման նպատակային նշանակությունը՝ չբացառելով հետագայում դրանց կատեգորիայի փոփոխությունը: Այդ նպատակով նախ անհրաժեշտ է փոփոխություններ կատարել <<Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին>> ՀՀ օրենքում՝ հստակեցնելով ըստ նպատակային նշանակության պետական արգելավայրերի դասակարգման չափորոշիչները և սահմանելով համապատասխան պահպանության ռեժիմները:

Ինչ վերաբերվում է պետական արգելավայրերի կառավարումն իրականացնող կազմակերպությունների կանոնադրական գործառույթներին, ապա դրանք հաստատված են ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով: Ըստ կառավարումն իրականացնող կազմակերպությունների՝ սահմանված գործառույթները արտահայտված են աղյուսակ 1-ում:

Ինչպես երևում է աղյուսակից՝ առաջին 7 կազմակերպությունները, որոնք ընդգրկված են ՀՀ բնապահպանության նախարարության համակարգում, պետական արգելավայրերի կառավարման հետ կապված ունեն որոշակի գործառույթներ: Դրա հետ մեկտեղ, հարկ է նշել, որ Հայաստանում գործող արգելավայրերն իրենց նպատակային նշանակությամբ բավականին տարբեր են, իսկ կազմակերպությունների համար սահմանված գործառույթները հիմնականում ընդհանրական են, նույնաբնույթ և չեն ընդգրկում տարբեր պետական արգելավայրերին բնորոշ գործառույթներ: 2002 թ.-ից ՀՀ բնապահպանության նախարարությունում սկսվեց պետական արգելավայրերի կանոնադրությունների մշակման և հաստատման գործընթացը: Մինչ օրս ՀՀ կառավարության որոշումներով հաստատվել են ՀՀ բնապահպանության նախարարության ենթակայության տակ գտնվող <<Սև լիճ>>, <<Որդան կարմիր>>, <<Սոսու պուրակ>>, <<Խոր Վիրապ>>, <<Գոռավանի ավազուտներ>>, <<Գիլան>>, <<Ջերմուկի ջրաբանական>>, <<Հանքավանի ջրաբանական>>, <<Զանգեզուր>> և <<Զիկատար>> պետական արգելավայրերի կանոնադրությունները: Վերջիններումս հիմնականում բացակայում են դրույթներ արգելավայրերի պահպանության ռեժիմների ապահովման մեխանիզմների, նպատակային նշանակության և շահագրգիռ կողմերի հետ հասարակական հարաբերությունների կարգավորման վերաբերյալ: Թեև տրվում է պահպանման գոտու պատկերացումը, սակայն սահմանների նկարագրությունները թերի են և պահպանման գոտու առկայությունը որևէ իրավական սահմանափակում չի նախատեսում՝օրենքով սահմանված պատժամիջոցների բացակայության պատճառով: Բոլոր պետական արգելավայրերի կանոնադրություններում բացակայում են դրույթներ՝ արգելավայրերի կառավարման պլանների վերաբերյալ: Բացի այդ, 2010 թվականին ՀՀ կառավարությունը հստակ սահմանազատեց ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի կենտրոնական ապարատի և առանձնացված ստորաբաժանումների իրավասությունները՝ կրկնություններից խուսափելու և ներդաշնակ գործունեություն ապահովելու նպատակով: Այս հանգամանքը էական ազդեցություն կարող է թողնել ՀՀ բնապահպանության նախարարությունում ներգերատեսչական համագործակցության խորացման վրա:

Ինչ վերաբերվում է <<Հայանտառ>> ՊՈԱԿ-ին, որն ընդգրկված է ՀՀ գյուղատնտեսության նախարարության համակարգում, ապա կազմակերպության կանոնադրությունում իսպառ բացակայում են գործառույթներ, որոնք կվերաբերվեին պետական արգելավայրերի կառավարմանը: Ընդ որում՝ վերջիններիս քանակը <<Հայանտառ>> ՊՈԱԿ-ում 13 է: Գործառույթների մասով տեղեկատվություն չի տրամադրել <<Ա.Ի.Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա>> ՊՈԱԿ-ը, որն ստանձնել է <<Արագածի ալպյան>> պետական արգելավայրի պահպանությունը:

Աղյուսակ 1

Պետական արգելավայրերի կառավարումն իրականացնող կազմակերպությունների գործառույթները

հ/հ	Կառավարումն իրականացնող կազմակերպությունը	Արգելավայրը	Սահմանված գործառույթները
1.	<<Խոսրովի անտառ>> պետական արգելոց>> ՊՈԱԿ	• <<Խոր վիրապ>> • <<Գոռավանի ավազուտներ>>	1. պետական արգելավայրերի տարածքների բնական էկոհամակարգերի, լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության, բնության ժառանգության գիտական ուսումնասիրության, պահպանության, պաշտպանության, հաշվառման, գույքագրման, դիտանցի, բնության տարեգրության վարման ապահովում. 2. գովազդի կազմակերպում. 3. տարածաշրջանին բնորոշ արժեքավոր, հազվագյուտ և անհետացող կենդանիների ու բույսերի տեսակների վերարտադրության կազմակերպում. 4. էկոհամակարգերի ուսումնասիրությունը, գործընթացների և երևույթների դիտանցը, դրանց կանխատեսումն ու գնահատումը, բուսական և կենդանական աշխարհի գենոֆոնդի պահպանությունը, էկոլոգիական վիճակի գնահատումն ու կանխատեսումը. 5. արգելավայրերի տարածքներում ապահովել դրանց կանոնադրություններով ամրագրված պահանջների կատարումը.
2.	<<Շիկահող>> պետական արգելոց>> ՊՈԱԿ	• <<Սոսու պուրակ>> • <<Զանգեզուր>>	1. պետական արգելավայրերի տարածքների բնական էկոհամակարգերի, լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության, բնության ժառանգության գիտական ուսումնասիրության, պահպանության, պաշտպանության, հաշվառման, գույքագրման, դիտանցի, բնության տարեգրության վարման ապահովում. 2. գովազդի կազմակերպում. 3. տարածաշրջանին բնորոշ արժեքավոր, հազվագյուտ և անհետացող կենդանիների ու բույսերի տեսակների վերարտադրության կազմակերպում. 4. էկոհամակարգերի ուսումնասիրությունը, գործընթացների և երևույթների դիտանցը, դրանց կանխատեսումն ու գնահատումը, բուսական և կենդանական աշխարհի գենոֆոնդի պահպանությունը, էկոլոգիական վիճակի գնահատումն ու կանխատեսումը. 5. արգելավայրերի տարածքներում ապահովել դրանց կանոնադրություններով ամրագրված պահանջների կատարումը.

3.	<<Դիլիջան>> ազգային պարկ>> ՊՈԱԿ	• <<Ախնաբադի կենու պուրակ>>	Արգելավայրը <<Դիլիջան>> ազգային պարկի 2007-2011 թթ. կառավարման պլանով ներառված է <<Աղավնավանքի կենու պուրակ>> արգելոցային գոտու մեջ. 1. էկոհոմակարգերի և դրանց բաղադրիչների գույքագրումն ու հաշվառումը, մոնիթորինգի, հանրակրթական ուսումնական հաստատությունների կրթադաստիարակչական միջոցառումների և բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսումնաարտադրական պրակտիկաների կազմակերպումն ու իրականացումը, զբոսաշրջության, ճանաչողական զբոսաշրջության և քաղաքացիների հանգստի հետ կապված վճարովի ծառայությունների մատուցումը.
4.	<<Սևան>> ազգային պարկ>> ՊՈԱԿ	• <<Գիհու նոսրանտառային>	1. էկոհոմակարգերի և դրանց բաղադրիչների գույքագրումն ու հաշվառումը, մոնիթորինգի, հանրակրթական ուսումնական հաստատությունների կրթադաստիարակչական միջոցառումների և բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսումնաարտադրական պրակտիկաների կազմակերպումն ու իրականացումը, զբոսաշրջության, ճանաչողական զբոսաշրջության և քաղաքացիների հանգստի հետ կապված վճարովի ծառայությունների մատուցումը.
5.	<<Արևիկ>> ազգային պարկ>> ՊՈԱԿ	• <<Բողաքարի>>	1. էկոհամակարգերի, լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, բնության ժառանգության գիտական ուսումնասիրության, պահպանության, պաշտպանության, վերականգնման, վերարտադրության, հաշվառման, գույքագրման, մոնիթորինգի, ինչպես նաև պարկի բնական պաշարների կայուն օգտագործման ապահովումը. 2. սանիտարական և խնամքի ծառահատումների արդյունքում ստացվող փայտանյութի մթերումն ու իրացումը. 3. բուսական և կենդանական պաշարների մթերումը և դրանց իրացումը. 4. զբոսաշրջության կազմակերպումը.
6.	<<Արգելոցապարկային համալիր>> ՊՈԱԿ	• <<Սև լիճ>> • <<Որդան կարմիր>> • <<Ջերմուկի ջրաբանական>> • <<Հանքավանի	1. էկոհամակարգերի, լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, բնության ժառանգության գիտական ուսումնասիրության, պահպանության, պաշտպանության, վերականգնման, վերարտադրության, հաշվառման, գույքագրման, մոնիթորինգի, ինչպես նաև պարկի բնական պաշարների կայուն օգտագործման ապահովումը.

		ջրաբանական>>	2. գովազդի կազմակերպում. 3. գիտական և գիտաճանաչողական գրականության և տեղեկատվական նյութերի պատրաստում ու հրատարակում. 4. տեղեկատվության տրամադրում և խորհրդատվություն.
7.	<<Զիկատար բնապահպանական կենտրոն>> ՊՈԱԿ	• <<Զիկատար>>	1. էկոհամակարգերի, լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, բնության ժառանգության գիտական ուսումնասիրության, պահպանության, պաշտպանության, վերականգնման, վերարտադրության, հաշվառման, գույքագրման, մոնիթորինգի, ինչպես նաև պարկի բնական պաշարների կայուն օգտագործման ապահովումը.
8.	<<Հայանտառ>> ՊՈԱԿ	• <<Արջատխլենու>> • <<Բանքսի սոճու>> • << Գորիսի>> • << Հեր-Հերի նոսրանտառային>> • << Գյուլագարակի>> • << Կովկասյան մրտավարդի>> • << Մարգահովիտի>> • << Արզականի և Մեղրաձորի>> • << Իջևանի>> • << Գանձաքարի>> • << Ջերմուկի>> • << Եղեգնաձորի>> • << Գետիկի>>	Արգելավայրերի մասով գործառույթներ սահմանված չեն:
9.	<<Ա.Ի.Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա>> ՊՈԱԿ	• <<Արագածի ալպյան>>	Տեղեկատվությունը բացակայում է:

Ուսումնասիրելով նաև Աղյուսակ 1-ում նշված նշված կազմակերպություններից և պետական տարածքային կառավարման մարմիններից ստացված պաշտոնական տեղեկատվությունը պետական արգելավայրերի կառավարման վերաբերյալ՝ կարելի է հանգել այն եզրակացության, որ այս բնագավառում բացակայում է համագործակցությունը շահագրգիռ կողմերի միջև:

Ամփոփելով տարբեր կազմակերպությունների կողմից պետական արգելավայրերի կառավարման առանձնահատկությունները՝ կարելի է արձանագրել հետևյալը՝

1. բացակայում են պետական արգելավայրերի կառավարման պլանները.
2. պետական արգելավայրերից շատերի սահմանները հաստատված չեն ՀՀ կառավարության կողմից.
3. պետական արգելավայրերի կառավարման գործընթացում թերի մոտեցում է ցուցաբերվում դրանց նպատակային նշանակությանը.
4. պետական արգելավայրերի կառավարման գործընթացներում իսպառ բացակայում է համագործակցությունը շահագրգիռ կողմերի միջև:

Այս ամենի արդյունքում տրամաբանական է, որ տարբեր կազմակերպությունների կողմից պետական արգելավայրերի կառավարման գործընթացներում առկա թերությունները պետք է բացասական ազդեցություն ունենան արգելավայրերի վերաբերյալ համայնքների իրազեկվածության մակարդակի վրա: Այսպես՝ պետական արգելավայրերին հարակից համայնքներում իրականացված ուսումնասիրությունների արդյունքները վկայում են, որ ազգաբնակչության շրջանում ցածր է պետական արգելավայրերի ստեղծման նպատակների և դրանցում առկա արժեքների, ինչպես նաև բնապահպանության ոլորտը կարգավորող օրենսդրության վերաբերյալ իրազեկվածության մակարդակը: Միաժամանակ, համայնքներում կարևորում են բնական պաշարների պահպանության բարելավման գործում գիտելիքների մակարդակի բարձրացումը, բնապահպանության ոլորտում իրավախախտումների կանխման գործում համայնքների բնակչության և տեղական ինքնակառավարման մարմինների վճռական դերակատարությունը, ինչպես նաև Համայնքների և պետական արգելավայրերի կառավարումն իրականացնող կազմակերպությունների միջև արդյունավետ համագործակցության հնարավորությունն ու անհրաժեշտությունը:

Ելնելով վերը շարադրվածից առաջնահերթ նշանակություն ունեն հետևյալ գործողությունները՝

1. <<Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին>> ՀՀ օրենքում հստակ դասակարգել պետական արգելավայրերը ըստ նշանակության և սահմանել պետական արգելավայրերի պահպանության ռեժիմը.
2. մշակել և սահմանված կարգով հաստատել պետական արգելավայրերի կառավարման պլանները:

2. Ինստիտուցիոնալ կապերի ձևավորման և ամրապնդման առաջարկվող շրջանակը

Առաջարկությունների և հետագա քննարկումների համար նախընտրելի հարցերի շրջանակը ձևավորվել է հիմք ընդունելով <<Հայաստանի պահպանվող տարածքների

համակարգի զարգացում>> ՄԱԶԾ/ԳԷՀ միջին ծավալի ծրագրի նպատակը, բնության հատուկ պահպանվող տարածքների վերաբերյալ իրականացված ծրագրերի և սույն ծրագրի շրջանակներում իրականացված ուսումնասիրությունների արդյունքները:

Անհրաժեշտ է նշել, որ ստորև ներկայացված պետական արգելավայրերի կառավարման ինստիտուցիոնալ կապերի հնարավոր շրջանակները սպառիչ չեն և միտված չեն սահմանափակելու տարբեր շահագրգիռ կողմերի հետաքրքրությունները: Ակնկալվում է, որ առաջարկությունների ստացման և հետագա քննարկումների արդյունքում կբացահայտվեն պետական արգելավայրերի կառավարումն իրականացնող կազմակերպությունների և շահագրգիռ կողմերի համագործակցության նոր և արդյունավետ հնարավորություններ, որոնք կնպաստեն պետական արգելավայրերի կառավարման գործընթացի հետագա բարելավմանը:

Պետական արգելավայրերի կառավարման գործընթացներին շահագրգիռ կողմերի մասնակցության ապահովումը որակապես նոր պահանջներ է դնում լիազորված պետական կառավարման մարմնի (ՀՀ բնապահպանության նախարարություն), պետական տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, գիտական, հասարակական կազմակերպությունների և ձեռնարկատերերի առջև՝ մեծացնելով նրանց պատասխանատվությունը բնության հատուկ պահպանվող տարածքների կայուն կառավարման գործում: Պետական արգելավայրերի արդյունավետ կառավարման գործընթացում շահագրգիռ կողմերի մասնակցությունը կարևորվում է նրանով, որ անհրաժեշտ է հնարավորինս մեղմել բնական պաշարների օգտագործման սահմանափակումների բացասական ազդեցությունը:

Հայաստանի պետական արգելավայրերի կառավարման գործընթացում ինստիտուցիոնալ կապերի ձևավորման գործում առաջնահերթ նշանակություն ունեն հետևյալ հարցերը՝

1. պետական արգելավայրերի կառավարումն իրականացնող կազմակերպությունների միջև համագործակցության կատարելագործումը.
2. կառավարման գործընթացներում հնարավոր շահագրգիռ կողմերի, նրանց հնարավորությունների և ներգրավման մեխանիզմների հստակեցումը:

2.1. Պետական արգելավայրերի կառավարումն իրականացնող կազմակերպությունների միջև համագործակցության կատարելագործում

Հայաստանում պետական արգելավայրերի կառավարումը ներկայումս իրականացվում է երեք գերատեսչությունների՝ ՀՀ բնապահպանության, գյուղատնտեսության և էկոնոմիկայի նախարարությունների ենթակայությամբ գործող պետական ոչ առևտրային կազմակերպությունների կողմից, որոնք միմյանց հետ գրեթե չեն համագործակցում: Ընդ որում՝ համագործակցությունը բավարար մակարդակով չի իրականացվում անգամ ՀՀ բնապահպանության նախարարության ենթակայությամբ գործող պետական ոչ առևտրային կազմակերպությունների միջև:

Ուսումնասիրությունների արդյունքները ցույց են տալիս, որ պետական արգելավայրերի կառավարումն իրականացնող կազմակերպությունների միջև համագործակցության հաստատմանը խոչնդոտող հիմնական գործոններն են՝

1. պետական արգելավայրերի նշանակության գիտակցության ցածր մակարդակը.
2. մասնագիտական ներուժի պակասը կամ կադրերի պատրաստվածության անբավարար մակարդակը.
3. համակարգված գործողությունների ծրագրերի բացակայությունը.
4. տեղեկատվության փոխանակման ցածր մակարդակը.
5. ընդհանուր շահերի, հետաքրքրությունների ուսումնասիրության արդյունքների բացակայությունը:

Նշված խոչընդոտների վերացման գործում առաջնային է համարվում պետական արգելավայրերի կառավարման գործընթացում միջգերատեսչական համագործակցության կատարելագործումը: Այսպիսի համագործակցությունը պետք է նպատակաուղղված լինի՝

1. բնության հատուկ պահպանվող տարածքների, այդ թվում՝ պետական արգելավայրերի կառավարման միասնական քաղաքականության մշակմանը և իրականացմանը,
2. գործողությունների ներդաշնակության ապահովմանը,
3. առկա խնդիրների համակարգված լուծմանը և արագ արձագանքման համակարգի գործունեության ապահովմանը,
4. տեղեկատվության համակարգված փոխանակությանը:

Պետական արգելավայրերի կառավարման գործընթացում միջգերատեսչական համագործակցության լիարժեք կայացումը զգալիորեն կնպաստի հետևյալ խնդիրների լուծմանը՝

1. միջգերատեսչական շահերի հաղթահարմանը.
2. օրենսդրության պահանջների արդյունավետ կատարմանը.
3. պետական արգելավայրերի կառավարման միասնական քաղաքականության իրականացմանը.
4. պետական արգելավայրերի կառավարումն իրականացնող պետական ոչ առևտրային կազմակերպությունների և այլ շահագրգիռ կողմերի միջև արդյունավետ համագործակցության կայացմանը:

Միջգերատեսչական արդյունավետ համագործակցության կայացման գրավականը պետական արգելավայրերի կառավարման գործընթացների համակարգումն է: Այն պետք է իրականացվի բնության հատուկ պահպանվող տարածքների բնագավառում լիազորված պետական մարմնի՝ ՀՀ բնապահպանության նախարարության կողմից: Պետական արգելավայրերի կառավարման գործընթացների համակարգումը ենթադրում է հետևյալը՝

1. համատեղ գործողությունների պլանների մշակումը և համաձայնեցումը.
2. գործողությունների արդյունքների վերլուծությունը, ամփոփումը և համաձայնեցումը.
3. կադրերի վերապատրաստման ապահովումը.
4. շահագրգիռ այլ կողմերի հետ համագործակցության հաստատումը.
5. տեղեկատվական միասնական համակարգի ստեղծումը և տեղեկատվության փոխանակման ապահովումը:

Որպես միջգերատեսչական համագործակցության հաստատման ուղի կարող է հանդիսանալ ՀՀ բնապահպանության, գյուղատնտեսության և էկոնոմիկայի նախարարությունների միջգերատեսչական հանձնաժողովի ստեղծումը (տես՝ նաև սույն Զեկույցի 2.3 ենթաբաժինը):

2.2. Պետական արգելավայրերի կառավարման բնագավառում շահագրգիռ կողմերը

Պետական արգելավայրերի կառավարման բնագավառում, բացի վերը նշված գերատեսչություններից և պետական ոչ առևտրային կազմակերպություններից, շահագրգիռ կողմեր կարող են հանդես գալ նաև այլ մարմիններ ու կազմակերպություններ, որոնց դերն ու նշանակությունը առանձնապես կարևորվում է որոշումների ընդունման և դրանց իրականացման գործընթացներում: Այդպիսի շահագրգիռ կողմերի շարքին են դասվում հետևյալ մարմիններն ու կազմակերպությունները:

1. ***<u>Պետական տարածքային կառավարման մարմինները</u>***. Հայաստանի 9 մարզերում, բացի Շիրակի մարզից, գործում են պետական արգելավայրեր (Աղյուսակ 2): Այդ տեսակետից կարևորվում է յուրաքանչյուր պետական տարածքային կառավարման մարմնի, որպես մարզի տարածքում գործող բնության հատուկ պահպանվող տարածքների, այդ թվում՝ պետական արգելավայրերի կառավարումն իրականացնող գործադիր մարմինների տարածքային կառույցների գործունեությունը համակարգողի դերը: Վերջինս զգալիորեն կնպաստի պետական արգելավայրերի արդյունավետ կառավարման գործընթացներում պետական կառավարման մարմինների և մարզպետարանների համագործակցության լիարժեք կայացմանն ու ներդաշնակ գործունեությանը: Ինչպես ցույց են տալիս մարզպետարանների բնապահպանության և գյուղատնտեսության վարչությունների սահմանված գործառույթների ուսումնասիրությունները՝ միայն ՀՀ Սյունիքի մարզպետարանի համապատասխան վարչության գործառույթներում է նշված, որ մարզպետարանը համակարգում է գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեությունը: Մյուս մարզպետարանների վարչությունների գործառույթները հիմնականում նույնությամբ կրկնվում են՝ նշելով, որ աջակցում են մարզի տարածքում գործող բնության հատուկ պահպանվող տարածքներին: Ակնհայտ է, որ մարզպետարանների բնապահպանության և գյուղատնտեսության վարչությունների գործառույթները ենթակա են վերանայման: Ընդ որում՝ վերանայումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ բնապահպանության նախարարության հետ սերտ համագործակցությամբ՝ ամրագրելով իրատեսական ինստիտուցիոնալ կապերը և փոխհամաձայնեցված ու ներդաշնակ գործունեությունն ապահովող դրույթները: Հարկ է նշել, որ ՀՀ կառավարության 21.05.2009 թ. N 562-Ն որոշմամբ հաստատվել է <<Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից կատարված աշխատանքների գնահատման կարգը, Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից կատարված աշխատանքների գնահատման չափորոշիչները, ինչպես նաև դրանց հիման վրա ձևավորվող գնահատականների միավորները>>: Սույն որոշմանը

հաջորդել է ՀՀ բնապահպանության նախարարի 12.09.2009 թ. N 226-Ն և ՀՀ տարածքային կառավարման նախարարի 12.09.2009 թ. N 27-Ն համատեղ հրամանը <<Բնության և շրջակա միջավայրի պահպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից կատարված աշխատանքների գնահատման չափորոշիչների մեթոդական ուղեցույցը հաստատելու մասին>>:

Աղյուսակ 2

Հայաստանի Հանրապետության մարզերում գործող պետական արգելավայրերը

Մարզը	**Արգելավայրը**	**Կառավարումն իրականացնող պետական մարմինը**
Արագածոտն	<<Արագածի ալպյան>>	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
Արարատ	<<Գոռավանի ավազուտներ>>	ՀՀ բնապահպանության նախարարություն
	<<Խոր վիրապ>>	
Արմավիր	<<Որդան կարմիր>>	ՀՀ բնապահպանության նախարարություն
Գեղարքունիք	<<Գիհու նոսրանտառային>>	ՀՀ բնապահպանության նախարարություն
	<< Գետիկի>>	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն
Լոռու	<< Գյուլագարակի>>	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն
	<< Կովկասյան մրտավարդի>>	
	<< Մարգահովիտի>>	
Կոտայք	<<Հանքավանի ջրաբանական>>,	ՀՀ բնապահպանության նախարարություն
	<<Բանքսի սոճու>>	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն
	<<Արզական-Մեղրաձոր>>,	
Սյունիք	<<Բողաքարի>>	ՀՀ բնապահպանության նախարարություն
	<<Սոսու պաւրակ>>	
	<<Սև լիճ>>	
	<<Զանգեզուր>>	
	<<Գորիսի>>	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն
Վայոց Ձոր	<<Ջերմուկի ջրաբանական>>	ՀՀ բնապահպանության նախարարություն
	<<Հեր-Հերի նոսրանտառային>>	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն
	<<Ջերմուկի >>	
	<< Եղեգնաձորի>>	
Տավուշ	<<Ախնաբադի կենու պուրակ>>	ՀՀ բնապահպանության նախարարություն
	<<Ձիկատար>>	
	<<Գանձաքարի>>	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն
	<<Իջևանի>>,	
	<<Արջատխլենու>>	

Ուսումնասիրով մարզպետարանների կողմից ներկայացված տարեկան աշխատանքային ծրագրերը՝ ակնհայտ է դառնում, որ մարզպետների կողմից կատարված աշխատանքների օբյեկտիվ գնահատումը չպետք է սահմանափակվի միայն փաստաթղթային մակարդակով: Այդ տեսակետից կարևորվում է վերը նշված ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետը, որտեղ նշվում է, որ ***<<Գնահատման լրացուցիչ չափորոշիչները ներառում են համապատասխան մարզում այն աշխատանքների կատարումը, որոնք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ուղղակի վերապահված չեն մարզպետին, սակայն մարզպետի***

կողմից՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների պատշաճ կատարումը կարող է էական նշանակություն ունենալ այդ աշխատանքների կատարման վերջնական արդյունքների վրա>>: Այստեղից կարելի է հանգել այն հետևությանը, որ պետական և տարածքային կառավարման մարմինները ցանկալի ***<<վերջնական արդյունքների>>*** հասնելու համար պետք է ամուր ինստիտուցիոնալ կապերի միջոցով ապահովեն ներդաշնակ գործունեություն:

2. ***<u>Տեղական ինքնակառավարման մարմինները.</u>*** Համաշխարհային փորձը վկայում է, որ շատ դեպքերում պետական արգելավայրերի կառավարման արդյունավետության բարձրացմանը կարելի է հասնել արգելավայրերի կառավարման գործընթացներում հարակից համայնքներին ճանաչելով որպես կարևոր գործոն: Համայնքներն ուղղակիորեն առնչվում են պետական արգելավայրերի ինչպես սահմանափակող, այնպես էլ հնարավոր օգուտների ստացման ազդեցության հետ: Հետևաբար պետական արգելավայրերի կայուն կառավարման գրավականը տեղական ինքնակառավարման մարմինների կողմից արգելավայրերի բնապահպանական կարևորության և հնարավոր օգուտների ստացման գիտակցումն է: Դրան հասնելու համար անհրաժեշտ է պետական արգելավայրերի գործունեության, ինչպես նաև ստեղծման անհրաժեշտության գաղափարը և հետագա արդյունավետ կառավարման գործընթացի առանձնահատկությունները տեղի բնակչությանը ներկայացնել ոչ միայն որպես սահմանափակումների ու պարտադրանքների հանրագումար, այլ շեշտը պետք է դրվի տարածքի բնապահպանական կարևորության, համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման համար լրացուցիչ հնարավորությունների ստեղծման ու հնարավոր շահույթների ստացման վրա: Պետական արգելավայրերի կառավարմանը համայնքների մասնակցության գործընթացը պետք է հիմնվի որոշումների կայացման բոլոր փուլերում նրանց ընդգրկուն ներգրավման գաղափարի հիման վրա: Անհրաժեշտ է ապահովել պետական արգելավայրերին և հարակից համայնքներին առնչվող որոշումների ընդունման գործընթացների առավելագույն թափանցիկությունը: Համայնքները պետք է մասնակցեն պահպանվող տարածքին առնչվող հնարավոր հարցերի և պոտենցիալ կոնֆլիկտային խնդիրների վերաբերյալ համատեղ լուծումների մշակմանն ու պլանավորվող գործողությունների իրականացմանը: Աշխատանքների կազմակերպման նման ձևը ամուր հիմքեր և բարենպաստ միջավայր կստեղծեն այդ որոշումների իրագործման համար՝ միաժամանակ բարձրացնելով տեղական բնակչության իրազեկության մակարդակը պետական արգելավայրերի արժեքների վերաբերյալ: Այս ամենին զուգահեռ, ինչպես ցույց են տալիս սույն ծրագրի շրջանակներում իրականացված ուսումնասիրությունների արդյունքները, զգալիորեն թույլ է կամ դեռևս բավարար մակարդակի վրա չէ համագործակցությունը պետական արգելավայրերի կառավարումն իրականացնող պետական կազմակերպությունների և համայնքների միջև: Այս հարցում որոշիչ դեր են խաղում համայնքների առկա կարողությունների հզորացումը, որում գլխավոր դերակատարումն ունեն ինչպես տեղական ինքնակառավարման մարմինները, այնպես էլ պետական և տարածքային կառավարման մարմինները: Վերջիններս առանցքային դերակատարում պետք է

ունենան նաև տեղական ինքնակառավարման մարմինների և համայնքների վարչական սահմաններում կամ հարակից գործող պետական արգելավայրերի կառավարումն իրականացնող պետական ոչ առևտրային կազմակերպությունների միջև ինստիտուցիոնալ կապերի հաստատման և զարգացման գործում:

3. ***<u>Գիտական հաստատությունները.</u>*** Հայաստանում գործող պետական արգելավայրերը հարուստ են հազվագյուտ, ՀՀ Կարմիր գրքերում գրանցված, էնդեմիկ, ռելիկտային տեսակներով, ինչպես նաև մշակովի բույսերի և ընտելացված կենդանիների տեսակների վայրի ազգակիցներով: Հաշվի առնելով այս, ինչպես նաև այն հանգամանքը, որ կառավարչական արդյունավետ որոշումների ընդունման գործում գիտական հետազոտությունների արդյունքները էական նշանակություն ունեն՝ կարևորվում է գիտական հաստատությունների դերը պետական արգելավայրերի կառավարման գործընթացներում: Խնդրի կարևորությունը կայանում է նրանում, որ պետական արգելավայրերի պատշաճ կառավարման համար անհրաժեշտ է լավ գիտական հիմք՝ կենսաբազմազանության, էկոլոգիական ծառայությունների, սոցիալական հարցերի և կառավարման ռազմավարությունների վերաբերյալ: Ինստիտուցիոնալ հզորությունների ուժեղացման առումով հատկապես կարևորվում է պետական արգելավայրերի կառավարումն իրականացնող կազմակերպությունների գիտության բաժինների գործունեությունը: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ պետական արգելավայրերում իրականացվող գիտական ուսումնասիրությունները չափազանց սահմանափակ են, հիմնականում չունեն ծագած խնդիրների լուծմանն ուղղված հստակ թեմատիկա և կապված չեն արգելավայրերի կառավարման որոշակի կարիքների հետ: Համագործակցության և ինստիտուցիոնալ կապերի հաստատումը համապատասխան գիտական հաստատությունների (ՀՀ ԳԱԱ Բուսաբանության, Երկրաբանական գիտությունների, Հնագիտության և ազգագրության ինստիտուտներ, Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն, Էկոլոգոնոոսֆերային հետազոտությունների կենտրոն, բարձրագույն ուսումնական հաստատությունների համապատասխան ամբիոններ և այլն) և պետական արգելավայրերի կառավարումն իրականացնող կազմակերպությունների միջև կնպաստի արգելավայրերի տարածքների լիարժեք գույքագրմանը, արժեքավոր տեսակների պահպանության բարելավմանը, վերարտադրության նպատակով գիտականորեն հիմնավորված միջոցառումների մշակմանը և բնական պաշարների բանական օգտագործմանը: Այս բնագավառում ինստիտուցիոնալ կապերի ձևավորմանը զգալիորեն կօժանդակի գիտական հաստատությունների կողմից հետազոտական աշխատանքներում պետական արգելավայրերի տարածքների ընդգրկումը, արգելավայրերի կառավարումն իրականացնող կազմակերպությունների հետ համատեղ գիտական հայտերի պատրաստումն ու ներկայացումը: Բացի այդ, դեռևս խորհրդային ժամանակահատվածում Հայաստանի Գիտությունների Ակադեմիայում բավական արդյունավետ գործում էր <<Բնության հատուկ պահպանվող տարածքներում գիտական ուսումնասիրությունները համակարգող խորհուրդը>>, որի կազմում ընդգրկված էին ՀԽՍՀ Բնության և շրջակա միջավայրի պահպանության պետական

կոմիտեի, ակադեմիական ինստիտուտների, պետական արգելոցների և այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ: Այս բնագավառում ինստիտուցիոնալ կապերի ձևավորման նպատակով հնարավոր է դիտարկել նաև նշված խորհրդի վերականգնման հարցը:

4. ***<u>Հասարակական կազմակերպությունները.</u>*** Հայաստանում գործում են 100-ից ավել հասարակական կազմակերպություններ, որոնք ունեն բնապահպանական ուղղվածություն: Հասարակական կյազմակերպությունների դերը հատկապես մեծ է պետական, տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակության մշտական կապը պահպանելու, հասարակության մտահոգությունները, բնապահպանական խնդիրները բացահայտելու և համապատասխան կառույցներին հասցնելու, հասարակական կարծիքը ներկայացնելու, հասարակության և զանգվածային լրատվության միջոցների հետ առավել ակտիվ աշխատանք տանելու հարցերում: Այս համատեքստում առանձնահատուկ կարևորություն է ձեռք բերում բնության հատուկ պահպանվող տարածքների վերաբերյալ որոշումներ ընդունելու և դրանք իրականացնելու գործընթացներին հասարակական կազմակերպությունների ակտիվ ներգրավումը:

Հարկ է նշել, որ ներկայումս Հայաստանում սույն գործընթացն աստիճանաբար ձեռք է բերում առարկայական ու բովանդակային իմաստ, որին զգալիորեն նպաստում է ինչպես գործող օրենսդրությունը (մասնավորապես՝ <<Հասարակական կազմակերպությունների մասին>>, <<Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքները, որոնք կարևորում են քաղաքացիական հասարակության զարգացումը, տեղեկություններ ստանալու կարգը, ձևերը և պայմանները), այնպես էլ Հայաստանի գրեթե բոլոր մարզերում գործող <<Օրհուս կենտրոնների>> առկայությունը և ձևավորված էկոլոգիական հասարակական դաշինքը: Վերջիններս, բնության հատուկ պահպանվող տարածքների, մասնավորապես՝ պետական արգելավայրերի հարցում, կարևոր դերակատարում կարող են ունենալ կայուն ինստիտուցիոնալ կապերի ձևավորման և պետական, տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների հետ արդյունավետ համագործակցության հաստատման գործում: Սույն նպատակին հասնելու համար անհրաժեշտ է, որ նշված երկու կառույցներն ուշադրություն դարձնեն իրենց մասնագիտական ներուժի զարգացմանը, քանի որ <<Օրհուս կենտրոններից>> և դաշինքում ընդգրկված հասարակական կազմակերպություններից շատերում բացակայում են կամ բավարար պատրաստվածություն չունեն համապատասխան մասնագետները:

Պետական արգելավայրերի գործունեության, որպես տեղական և տարածաշրջանային կայուն զարգացման կենտրոններ, արդյունավետությանն ուղղված ինստիտուցիոնալ կապերի հաստատման համար էական ազդեցություն կարող է ունենալ ՀՀ Վարչապետի ղեկավարությամբ գործող <<Կայուն զարգացման միջգերատեսչական խորհուրդը>>, որի կազմում ընդգրկված են նաև հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Այս ամենը վկայում են, որ Հայաստանում պետական արգելավայրերի վերաբերյալ որոշումների ընդունման և դրանց

իրականացման գործընթացներում հասարակական կազմակերպությունների արդյունավետ ներգրավման համար գրեթե խոչընդոտներ չկան: Չնայած դրան, դեռևս առկա է որոշակի փոխադարձ անվստահությունը պետական կառույցների և հասարակական կազմակերպությունների միջև: Այն հաղթահարելու համար անհրաժեշտ է, որպեսզի պետական կառույցները համապատասխան որոշումների ընդունման և դրանց իրականացման գործընթացները դարձնեն առավել թափանցիկ, իսկ հասարակական կազմակերպությունները չպետք է սահմանափակվեն միայն թերացումները մատնանշելով:

5. ***<u>Ձեռնարկատերերը.</u>*** Հայաստանում գործող պետական արգելավայրերը և սույն ծրագրով նախատեսված նոր ստեղծվող արգելավայրերը (<<Գնիշիկ>> և <<Խուստուփ>>) պարունակում են բավական մեծ ներուժ ձեռնարկատիրական գործունեության համար: Հաշվի առնելով արգելավայրերի նպատակային նշանակությունը և արգելավայրերում բնական երևույթների զարգացման գործընթացներին մարդու միջամտության հնարավորությունը՝ ձեռնարկատիրական գործունեություն կարելի է ծավալել հետևյալ ուղղություններով՝

- տարածքին բնորոշ արժեքավոր բուսատեսակների (դեղաբույսեր, ուտելի բույսեր, տեխնիկական, գեղազարդային բույսեր և այլն) և կենդանատեսակների (որդան կարմիր, արժեքավոր ձկնատեսակներ և այլն) վերարտադրության ապահովում, մթերում և իրացում.
- զբոսաշրջության և էկոզբոսաշրջության իրականացում.
- քաղաքացիների հանգստի կազմակերպում.
- հուշանվերների պատրաստում և վաճառքի կազմակերպում, այդ թվում՝ նախատեսվող այցելուների տեղեկատվական կենտրոններում:

Չնայած պետական արգելավայրերի կառավարումն իրականացնող պետական ոչ առևտրային կազմակերպություններն օրենսդրությամբ սահմանված կարգով իրավունք ունեն զբաղվելու ձեռնարկատիրական գործունեությամբ, սակայն նպատակահարմար է, որպեսզի այս գործունեությամբ շահագրգռված լինեն նաև ձեռնարկատերերը: Վերջիններս առավել լայն հնարավորություններ ունեն ստեղծելու և զարգացնելու համապատասխան ենթակառուցվածքներ՝ հումքի վերամշակման արտադրություններ, սպասարկման ծառայություններ, այդ թվում՝ զբոսաշրջիկների ուղեկցողներ դեպի արգելավայրեր, գյուղական համայնքներում պանդոկ/հյուրատների (B&B) ցանցի հիմնում և այլն: Նման գործունեությունը ոչ միայն կնպաստի համայնքներում մարդկային ռեսուրսների ճիշտ օգտագործմանն ու զարգացմանը, այլև՝ համայնքային բյուջեի համալրմանը: Արդյունքում՝ պետական արգելավայրերի կառավարումն իրականացնող պետական ոչ առևտրային կազմակերպությունների, ձեռնարկատերերի և համայնքների միջև կստեղծվեն գործնական հարաբերություններ, որով հնարավոր կլինի կանխարգելել կամ մեղմել արգելավայրերի շուրջ ծագած կոնֆլիկտային իրավիճակները:

2.3. Ինստիտուցիոնալ կապերի ձևավորման մեխանիզմները

Պետական արգելավայրերի կառավարման գործընթացում ինստիտուցիոնալ կապերի ձևավորման նախընտրելի տարբերակը շահագրգիռ կողմերի ներգրավմամբ կառավարման կամ խորհրդատվական մարմինների ստեղծումն է, որը կարևորվում է ինչպես Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքների վերաբերյալ իրականացված և իրականացվող ծրագրերում, այնպես էլ միջազգային պրակտիկայում: Ընդ որում՝ այդպիսի մարմինների ստեղծումը կարելի է իրականացնել հետևյալ երկու մակարդակով:

1. Առաջին մակարդակում առաջարկվում է ՀՀ բնապահպանության նախարարությունում, որպես բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման բնագավառում պետական լիազորված մարմին, ստեղծել <<Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքների գործունեությունը համակարգող խորհուրդ>>: Սույն խորհրդի ստեղծումը զգալիորեն կնպաստի ինչպես տարբեր գերատեսչությունների կառավարման ներքո գտնվող բնության հատուկ պահպանվող տարածքների գործունեության համակարգմանը և միասնական քաղաքականության իրականացմանն ու տեղեկատվության փոխանակմանը, այնպես էլ բնության հատուկ պահպանվող տարածքների վերաբերյալ որոշումների ընդունման գործընթացների թափանցիկության բարձրացմանը և ընդունված որոշումների արդյունավետ իրականացմանը: Նպատակահարմար է խորհրդի կազմում ընդգրկել ՀՀ բնապահպանության, գյուղատնտեսության, էկոնոմիկայի, տարածքային կառավարման, ֆինանսների, կրթության և գիտության, մշակույթի նախարարությունների, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին: Ընդ որում՝ խորհրդի նիստերի օրակարգի ձևավորումը և ընդունված որոշումների իրականացումը կապահովի ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի կենսառեսուրսների կառավարման գործակալությունը, որն իր կանոնադրության համաձայն համակարգում է Հայաստանի ԲՀՊՏ-ների գործունեությունը:
2. Երկրորդ մակարդակում առաջարկվում է բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարումն իրականացնող պետական ոչ առևտրային կազմակերպություններում ստեղծել խորհրդատվական մարմիններ, որոնք ակտիվորեն կմասնակցեն կառավարման գործընթացներին, համագործակցության միջոցով դրանք կդարձնեն փոխշահավետ և արդյունքում առկա հիմնախնդիրների լուծումը կդառնա առավել իրատեսական ու առարկայական: Ընդ որում՝ խորհրդատվական մարմինների գործունեությունը առաջին հերթին պետք է ուղղվի ԲՀՊՏ-ներին հարակից համայնքների միջև ծագող կոնֆլիկտների վերացմանը կամ մեղմացմանը և փոխհամաձայնեցված որոշումների ընդունմանն ու դրանց իրականացմանը: Նպատակահարմար է այս խորհուրդների կազմում ընդգրկել պետական տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, տեղական գիտական, ուսումնական և հասարակական կազմակերպությունների, ձեռնարկատերերի ներկայացուցիչներին:

Հարկ է նշել, որ առաջին և երկրորդ մակարդակներում ստեղծված խորհուրդները պետք է մշակեն և իրականացնեն իրենց գործունեության կանոնակարգերը: Անհրաժեշտ է, որ վերջիններս լինեն փոխկապակցված, համահունչ և ներդաշնակ: Բացի այդ, արգելավայրերի կառավարման արդյունավետությունը գնահատելու համար անհրաժեշտ է մշակել և կիրառել մոնիթորինգի և գնահատման երկարաժամկետ ծրագրեր: Կառավարման արդյունավետության գնահատումներից ստացված հիմնական արդյունքները քննարկման առնել խորհրդատվական մարմիններում և հաշվի առնել արգելավայրերի կառավարման պլանների վերանայման և հետագա աշխատանքների կազմակերպման ընթացքում:

Հարկ է նշել, որ պետական արգելավայրերի կառավարման բնագավառում միասնական քաղաքականություն իրականացնելու համար, ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը, առավել նպաստավոր պայմաններ ստեղծվում են, երբ ոլորտի համակարգումը կատարվում է կառավարության մեկ լիազորված մարմնի կողմից, որը մշակում և տարբեր պետական մարմինների ենթակայությամբ գործող ԲՀՊՏ-ներում ներդրման համար առաջարկում է միասնական ռազմավարական սկզբունքներ՝ ստանդարտներ, տեխնոլոգիաներ, նորմեր, իրականացնում է հսկողություն դրանց կատարման և պահպանության ռեժիմի վերաբերյալ: Հայաստանում ՀՀ օրենսդրությամբ սահմանված է ԲՀՊՏ-ների կառավարման մեկ լիազորված մարմին՝ ՀՀ բնապահպանության նախարարությունը, իսկ ԲՀՊՏ-ների գերատեսչական պատկանելիությունը չի սահմանափակվում: Հետևաբար, եթե ՀՀ բնապահպանության նախարարությունն իր իրավասությունների շրջանակներում պատշաճ ձևով իրականացնի իրեն վերապահված գործառույթները, ապահովելով տարբեր կատեգորիաների ԲՀՊՏ-ների միասնական քաղաքականությունը, ապա դրանց պատկանելիությունը տարբեր կառավարման մարմիններին չի ավելացնի համակարգի կայունությանը սպառնացող ռիսկերը:

2.4. Պետական արգելավայրերի կառավարման գործընթացում շահագրգիռ կողմերի մասնակցության հնարավորությունները

Պետական արգելավայրերի կառավարման գործընթացում շահագրգիռ կողմերի մասնակցության հնարավորությունների բացահայտումը պետք է իրականացվի բազմակողմանի համատեղ քննարկումների միջոցով: Այդ նպատակով նախատեսվում են հետևյալ քայլերը.

1. սույն զեկույցը պաշտոնապես լայն շրջանառության մեջ է դրվում՝ տրամադրվելով վերը նշված բոլոր շահագրգիռ կողմերին.
2. շահագրգիռ կողմերը զեկույցի վերաբերյալ ներկայացնում են իրենց պաշտոնական կարծիքները, առաջարկություններն ու դիտողությունները՝ նշելով նաև արգելավայրերի կառավարման գործընթացներում իրենց մասնակցության հնարավորությունները.
3. շահագրգիռ կողմերից ստացված պաշտոնական կարծիքները, առաջարկություններն ու դիտողությունները, ինչպես նաև պետական արգելավայրերի կառավարման գործընթացներում իրենց մասնակցության հնարավորությունների վերաբերյալ

տեղեկատվությունը վերլուծվում և ամփոփվում են, անհրաժեշտության դեպքում փոփոխություններ կատարվում զեկույցում.

4. զեկույցի վերաբերյալ շահագրգիռ կողմերից ստացված պաշտոնական կարծիքների, առաջարկությունների ու դիտողությունների, ինչպես նաև արգելավայրերի կառավարման գործընթացներում իրենց մասնակցության հնարավորությունների վերաբերյալ տեղեկատվության վերլուծականը կրկին տրամադրվում է շահագրգիռ կողմերին՝ միաժամանակ ներկայացնելով հրավերք (համապատասխան օրակարգով) սահմանված ժամկետում և վայրում մասնակցել խորհրդակցության:

Ա Մ Փ Ո Փ ՈՒ Մ

Ամփոփելով տարբեր գերատեսչությունների կողմից պետական արգելավայրերի կառավարման առանձնահատկությունների, ազգաբնակչության իրազեկվածության մակարդակի բացահայտման և շահագրգիռ կողմերի միջև ինստիտուցիոնալ կապերի ձևավորման վերաբերյալ կատարված ուսումնասիրությունների արդյունքները՝ կարելի է հանգել հետևյալ եզրակացություններին.

1. ներկայումս տարբեր գերատեսչությունների կողմից պետական արգելավայրերի կառավարումն իրականացվում է առանց շահագրգիռ կողմերի հետ փոխհամաձայնեցված գործողություններով և չհամակարգված.
2. պետական արգելավայրերին հարակից համայնքները ընդհանուր առմամբ տեղյակ են գործող արգելավայրերի մասին, սակայն իրազեկված չեն արգելավայրերի նպատակային նշանակության և արգելավայրերում պահպանվող արժեքների վերաբերյալ.
3. արգելավայրերի արդյունավետ կառավարումն ապահովելու համար արդիական է շահագրգիռ կողմերի միջև ինստիտուցիոնալ կապերի ձևավորումը և համակարգված գործողությունների իրականացումը:

Ակնկալվում է, որ շահագրգիռ կողմերը գիտակցելով Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքների տարածաշրջանային և տեղական նշանակությունը, ինչպես նաև սույն զեկույցում ներկայացված համագործակցության շրջանակների վերաբերյալ առաջարկությունների կարևորությունը՝ պատշաճ մակարդակով կմասնակցեն նախատեսված քննարկումներին: Արդյունքում կընդունվի Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքների համակարգի արդյունավետ կառավարման մեխանիզմների վերաբերյալ փոխհամաձայնեցված Բանաձև, որը կներկայացվի որոշումներ ընդունող պատկան մարմիններին: